British Embassy
Yerevan

Հայաստանի
Հանրապետության
Ազգային Ժողով

Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն

UKaid
from the British people

Good Governance Fund

Ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» շրջանակում՝ բրիտանացի ժողովրդի տրամադրած աջակցությամբ

Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ընթացքում իրավասու մարմիններից և պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալու հետ կապված հարցերի վերաբերյալ

«ՀՀ Ազգային ժողովի՝ քաղաքական բանավեճեր վարելու և ռազմավարական հաղորդակցություն ապահովելու կարողությունների հզորացում» ծրագիր

“Strengthening the capacity of the National Assembly in strategic political debate and communication” project

www.gov.uk/world/armenia
https://www.facebook.com/britishembassyyerevan/
https://twitter.com/UKinArmenia
www.ichd.org

Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ընթացքում իրավասու մարմիններից և պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալու հետ կապված հարցերի վերաբերյալ

Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովը (այսուհետ՝ Քննիչ հանձնաժողով) 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ նախատեսված՝ Ազգային ժողովի և հատկապես՝ խորհրդարանական ընդդիմության կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության իրականացման նոր և ազդեցիկ գործիքներից մեկն է:

Սույն վերլուծության նպատակն է ներկայացնել Քննիչ հանձնաժողովի գործունեության ընթացքում իրավասու մարմիններից և պաշտոնատար անձանցից գրավոր տեղեկություններ ստանալու, հանձնաժողովի հրավերով՝ իրավասու պաշտոնատար անձանց հանձնաժողով ներկայանալու և բացատրություններ տալու հետ կապված օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև այդ անձանց կողմից օրենքի պահանջները չկատարելու դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները:

Հաշվի առնելով, որ նշված հարցերը սերտորեն փոխկապակցված են Քննիչ հանձնաժողովի ստեղծման, կազմի և գործունեության կարգի հետ՝ ստորև ներկայացվում է նաև համապատասխան օրենսդրական կարգավորումների վերլուծությունը:

1. Քննիչ հանձնաժողովի ստեղծումը:

Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով, **իրավունքի ուժով ստեղծվում** է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով: Նույն հոդվածի 2-րդ մասով՝ Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշելու իրավասությունը վերապահվել է Ազգային ժողովին: Այս հանգամանքը թերևս կարող է քննիչ հանձնաժողովի ստեղծումը կախվածության մեջ դնել քաղաքական մեծամասնության կամքից: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտպանության և անվտանգության բնագավառներում Քննիչ հանձնաժողովի լիազորություններ կարող է իրականացնել միայն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով:

Նշենք, որ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ նույնպես նախատեսված էր Քննիչ հանձնաժողովին որոշակիորեն նման մարմին՝ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովը, որն անհրաժեշտության դեպքում կարող էր ստեղծվել Ազգային ժողովի որոշմամբ՝ որոշակի հարցերի, իրադարձությունների և փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար: Սակայն, այդ երկու հանձնաժողովների ստեղծման կարգերում էական տարբերությունն այն է, որ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովը գործնականում կարող էր ստեղծվել խորհրդարանական մեծամասնության համաձայնությամբ, քանի որ դրա համար պահանջվում էր Ազգային ժողովի որոշում, իսկ Քննիչ հանձնաժողովը ստեղծվում է իրավունքի ուժով՝ առանց Ազգային ժողովի որոշման և ըստ էության դրա համար բավարար է խորհրդարանական ընդդիմության պահանջը: Այդ մասին է վկայում նաև 2018 թվականի դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների արդյունքով կազմավորված՝ յոթերորդ գումարման Ազգային ժողովի կազմը (պատգամավորների ընդհանուր թիվը՝ 132 է, «Իմ քայլը» կառավարող խմբակցությունն ունի 88 անդամ, իսկ «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» ընդդիմադիր խմբակցությունները համապատասխանաբար՝ 26 և 18 անդամ): Այդ գումարման Ազգային ժողովում պաշտպանության և անվտանգության բնագավառի հարցերով Քննիչ հանձնաժողով կարող է ստեղծվել առնվազն 44, իսկ այլ հարցերով Քննիչ հանձնաժողով՝ առնվազն 33 պատգամավորի պահանջով: Ուստի, Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների անդամների ընդհանուր թիվը (44 պատգամավոր) բավարար է որևէ հարցով Քննիչ հանձնաժողով ստեղծելու համար:

Այստեղ պետք է հաշվի առնել, որ թեև համապատասխան թվով պատգամավորների պահանջով՝ իրավունքի ուժով Քննիչ հանձնաժողովի ստեղծումը Սահմանադրությամբ երաշխավորված է, սակայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանված է Քննիչ հանձնաժողով ստեղծելու մասին պատգամավորների պահանջի ներկայացման կարգ, որին չհամապատասխանելու դեպքում պահանջն Ազգային ժողովի նախագահի կողմից ենթակա է վերադարձման: Այսպես, Կանոնակարգի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Քննիչ հանձնաժողովը համարվում է ստեղծված Քննիչ հանձնաժողովի ստեղծման մասին պահանջն Ազգային ժողովի նախագահին ներկայացվելու պահից, եթե այն համապատասխանում է Կանոնակարգի 20-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներին, այսինքն՝

1) Քննիչ հանձնաժողով ստեղծելու մասին պահանջն Ազգային ժողովի նախագահին է ներկայացվել անհրաժեշտ թվով պատգամավորների ստորագրած գրավոր դիմումով.

2) գրավոր դիմումում նշված են Քննիչ հանձնաժողովի քննության առարկան, իրավասության ոլորտը, նախագահի անունը, ազգանունը, բացառությամբ՝ պաշտպանության և անվտանգության բնագավառի հարցերով Քննիչ հանձնաժողովի, ինչպես նաև Քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը.

3) գրավոր դիմումին կցված է Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ, բացառությամբ՝ պաշտպանության և անվտանգության բնագավառի հարցերով Քննիչ հանձնաժողովի:

2. Քննիչ հանձնաժողովի քննության առարկան և իրավասության ոլորտը:

Քննիչ հանձնաժողովի քննության առարկան կարող է լինել Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող որևէ կոնկրետ հարցին վերաբերող փաստերը պարզելը:

Հաշվի առնելով, որ Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող հարցերի սպառիչ ցանկ Սահմանադրությամբ կամ Կանոնակարգով սահմանված չէ, ստորև ներկայացվում են Ազգային ժողովի որոշ լիազորություններ և գործառույթներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ Քննիչ հանձնաժողովի քննության առարկան որոշելու համար՝

1) Սահմանադրության 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր իշխանությունը: Այս դեպքում քննության առարկա կարող է լինել, օրինակ՝ որևէ օրենքի կատարման ընթացքում ի հայտ եկած որոշակի խախտումների, բացթողումների, թերացումների և այլ բացասական երևույթների (մասնավորապես՝ օրենքով սահմանված նորմի կատարումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն օրենքով սահմանված ժամկետում չընդունելը) վերաբերյալ փաստերը պարզելը:

2) Սահմանադրության 111-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ: Այս դեպքում քննության առարկա կարող է լինել, օրինակ՝ պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի եզրակացությունում առկա բացասական եզրահանգման մեջ առկա փաստերը («Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ նման եզրահանգումը Հաշվեքննիչ պալատի կարծիքում ներառվում է, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են), ինչպես նաև պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության, արդյունավետության, ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ այլ փաստերը պարզելը:

3) Սահմանադրության 195-րդ, 197-րդ և 199-րդ հոդվածների 6-րդ, 201-րդ հոդվածի 5-րդ մասերի համաձայն, համապատասխանաբար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի

անդամի, Հաշվեքննիչ պալատի անդամի, Կենտրոնական բանկի նախագահի և մյուս անդամների լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը, եթե տվյալ պաշտոնատար անձը խախտել է Սահմանադրությամբ սահմանված պայմաններից որևէ մեկը: Այս դեպքում քննության առարկա կարող է լինել, օրինակ՝ նշված մարմիններից որևիցէ մեկի անդամի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ փաստերը պարզելը:

4) Սահմանադրության 177-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել, եթե նա խախտել է այդ օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները: Այս դեպքում քննության առարկա կարող է լինել, օրինակ՝ գլխավոր դատախազի կողմից այդ օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված պահանջը խախտելու (դատախազը իրավունք չունի ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական գույքը և ծառայողական տեղեկատվությունը) վերաբերյալ փաստերը պարզելը:

Քննիչ հանձնաժողովի իրավասության ոլորտը ուղղակիորեն փոխկապակցված է նրա քննության առարկայի հետ և առավելապես պայմանավորված է համապատասխան փաստերը պարզելու համար անհրաժեշտ տեղեկությունները տնօրինող, ինչպես նաև հանձնաժողովի քննության առարկային առնչվող իրավական ակտեր ընդունած, այլ գործողություններ ձեռնարկած կամ անգործություն ցուցաբերած պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային կազմակերպությունների, հիմնարկների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց, իսկ որոշակի դեպքերում՝ հանձնաժողովին տեղեկություններ ներկայացրած այլ անձանց շրջանակով, իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց լիազորություններով կամ գործառույթներով:

3. Քննիչ հանձնաժողովի կազմը, նախագահը և նրա տեղակալը:

Սահմանադրության 108-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Քննիչ հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է Ազգային ժողովը: Քննիչ հանձնաժողովում նախագահում է պահանջը ներկայացնող պատգամավորներից մեկը:

Կանոնակարգի 20-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ **Քննիչ հանձնաժողովի կազմը** և դրանում փոփոխությունները հաստատում է Ազգային ժողովի նախագահը՝ Կանոնակարգի 11-րդ հոդվածի 2-6-րդ մասերով սահմանված սկզբունքներին

համապատասխան, ըստ որի՝ Քննիչ հանձնաժողովում Ազգային ժողովի խմբակցությունները պետք է ներկայացված լինեն գրեթե նույն համամասնությամբ, ինչպես Ազգային ժողովում: Օրինակ, յոթերորդ գումարման Ազգային ժողովում 9 անդամ ունեցող Քննիչ հանձնաժողովում «Իմ քայլը» խմբակցությունը կունենա 6, «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը՝ 2, «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը՝ 1 անդամ:

Ազգային ժողովի կողմից Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանվելուց հետո Ազգային ժողովի նախագահը՝ վերոգրյալ սկզբունքներին համապատասխան՝ խմբակցությունների առաջարկությամբ, հաստատում է Քննիչ հանձնաժողովի անդամների անվանական կազմը: Պաշտպանության և անվտանգության բնագավառի հարցերով Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը, ինչպես նաև անվանական կազմը վերը նշված կարգով չի սահմանվում, քանի որ այդ հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է Ազգային ժողովի իրավասու հանձնաժողովը (յոթերորդ գումարման Ազգային ժողովում՝ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը):

Պաշտպանության և անվտանգության բնագավառի հարցերով **Քննիչ հանձնաժողովի նախագահն** Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահն է, իսկ Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերով Քննիչ հանձնաժողովի նախագահը՝ այդ հանձնաժողովը ստեղծելու մասին պատգամավորների պահանջում նշված պատգամավորն է:

Պաշտպանության և անվտանգության բնագավառի հարցերով **Քննիչ հանձնաժողովի նախագահի տեղակալն** Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալն է, իսկ Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերով Քննիչ հանձնաժողովի նախագահի տեղակալն ընտրվում է այդ հանձնաժողովի որոշմամբ: Կանոնակարգի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե այդ Քննիչ հանձնաժողովի նախագահի պաշտոնը զբաղեցնում է Ազգային ժողովի կառավարող խմբակցության ներկայացուցիչը, ապա հանձնաժողովի նախագահի տեղակալը պետք լինի Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչը, իսկ նախագահի պաշտոնն Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցության ներկայացուցչի կողմից զբաղեցվելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը պետք է լինի Ազգային ժողովի կառավարող խմբակցության ներկայացուցիչը:

4. Քննիչ հանձնաժողովի գործունեությունը, իրավասու մարմիններից և պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալը:

Քննիչ հանձնաժողովի գործունեության հիմնական նպատակը իր քննության առարկային համապատասխան՝ փաստերը պարզելու համար անհրաժեշտ

տեղեկություններ և այլ ապացույցներ հավաքելն է, ինչպես նաև պարզված փաստերը, դրանց հետազոտման և գնահատման արդյունքով իր եզրահանգումներն Ազգային ժողովին ներկայացնելն է:

Կանոնակարգի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **Քննիչ հանձնաժողովն անհրաժեշտ տեղեկությունները կարող է ստանալ իր անդամների առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ՝ առանց որոշման**, գրավոր դիմելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց՝ պահանջելով իր իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ: Քննիչ հանձնաժողովի՝ անհրաժեշտ թվով անդամների ստորագրությամբ, գրավոր դիմումը ստացած մարմինը կամ պաշտոնատար անձը Սահմանադրության 108-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ պարտավոր է հանձնաժողովին տրամադրել պահանջվող տեղեկությունը, եթե դրա տրամադրումն օրենքով արգելված չէ: Սահմանադրության նշված դրույթից ուղղակիորեն բխում է, որ տեղեկության տրամադրումը կարող է մերժվել միայն այն դեպքում, երբ դա արգելված է օրենքի որոշակի, կոնկրետ նորմով: Ուստի, այդ դրույթի պահանջն ապահովելու համար Քննիչ հանձնաժողովի անդամների գրավոր դիմումը ստացած մարմինը կամ պաշտոնատար անձը՝ տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում, պարտավոր է իր պատասխան գրության մեջ հստակ և ուղղակի հղում կատարել օրենքի համապատասխան մասին (հոդվածին, կետին, ենթակետին): Նշված հիմքով տեղեկության տրամադրումը մերժելիս պետք է նաև հաշվի առնվի, որ Ազգային ժողովի պատգամավորներն ունեն, օրենքով պահպանվող, օրինակ՝ պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող, որոշակի գաղտնիության աստիճանի տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Կանոնակարգի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Քննիչ հանձնաժողովը կարող է իր որոշմամբ դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց՝ **հանձնաժողովում քննարկվող հարցի փաստական հանգամանքների ուսումնասիրման համար՝ պատվիրելով փորձաքննություններ**, և ստանալ դրանց արդյունքում կազմված եզրակացությունները: Փորձաքննության (մասնավորապես, Քննիչ հանձնաժողովի գործունեության ընթացքում առավել հնարավոր՝ փաստաթղթաբանական, ֆոտոտեխնիկական, տեսաձայնագրման, տնտեսագիտական և այլն) կատարման ծառայության նախահաշվային արժեքը սահմանված է Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N-79-Ն որոշմամբ, իսկ փորձաքննության պատվերն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կանոնակարգի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ **Քննիչ հանձնաժողովը կարող է իր որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց**, ինչպես նաև այն անձանց, որոնք ներկայացրել են հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ: Կանոնակարգի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Քննիչ հանձնաժողով հրավիրված պաշտոնատար անձինք պարտավոր են, իսկ հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած այլ անձինք իրավունք ունեն ներկայանալու և

բացատրություններ տալու հանձնաժողովի նիստում, ինչպես նաև պատասխանելու հանձնաժողովի անդամների հարցերին: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել այն կարևոր հանգամանքի վրա, որ **ի տարբերություն գրավոր տեղեկությունների, որոնք պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից Քննիչ հանձնաժողովին են տրամադրվում հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդի պահանջով, իրավասու պաշտոնատար անձը հանձնաժողով կարող է հրավիրվել և բացատրություններ տալ միայն հանձնաժողով որոշմամբ**: Ինչպես արդեն նշել ենք, Քննիչ հանձնաժողովի կազմն արտահայտումը է նույն համամասնությունը, ինչն Ազգային Ժողովինն է: Ուստի, Քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդը ներկայացնող խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչներն իրավասու մարմիններից և պաշտոնատար անձանցից գրավոր տեղեկություններ պահանջելու համար բավարար թվով ձայներ ունեն: Ինչ վերաբերվում է իրավասու պաշտոնատար անձին հանձնաժողով հրավիրելուն, ապա հաշվի առնելով, որ Կանոնակարգի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **Քննիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ**, կարող ենք արձանագրել, որ տվյալ դեպքում արդեն անհրաժեշտ է հանձնաժողովի կազմում ընդգրկված Ազգային ժողովի կառավարող խմբակցության ներկայացուցիչների կամ նրանց մի մասի համաձայնությունը, քանի որ առանց նման համաձայնության՝ իրավասու պաշտոնատար անձին Քննիչ հանձնաժողով հրավիրելու և բացատրություններ տալու մասին հանձնաժողովի որոշումը չի ընդունվի:

Պետք է նաև նշել, որ Քննիչ հանձնաժողովի որոշմամբ հանձնաժողով ներկայանալու և բացատրություններ տալու պարտականությունը տարածվում է առանց բացառության՝ բոլոր իրավասու պաշտոնատար անձանց վրա:

Պաշտոնատար անձը՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան՝ հանրային (պետական (քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական)) կամ համայնքային (քաղաքական, վարչական և հայեցողական) պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև նշված օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան՝ հանրային ծառայության պաշտոն (պետական ծառայության առանձին տեսակների համար նախատեսված պաշտոնների անվանացանկով կամ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված հաստիքային միավոր) զբաղեցնող անձն է:

Իրավասու պաշտոնատար անձը՝ այն պաշտոնատար անձն է, ով ունի Քննիչ հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ և իրավասու է դրանք տրամադրել կամ հայտնել հանձնաժողովին:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները կատարելը հանրային ծառայողի, ընդ որում՝ հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, հիմնական պարտականություններից է:

Ուստի, Կանոնակարգի 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները չկատարելու (Քննիչ հանձնաժողովի պահանջած տեղեկությունները սահմանված կարգով չտրամադրելու), ինչպես նաև Կանոնակարգի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պարտականությունը չկատարելու (Քննիչ հանձնաժողովի հրավերով հանձնաժողով չներկայանալու և բացատրություններ չտալու) դեպքում համապատասխան պաշտոնատար անձի (բացառությամբ՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց), նկատմամբ կարող են օրենքով սահմանված կարգով կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոցներ: Ինչ վերաբերվում է քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական քաղաքական պաշտոններն են Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, փոխվարչապետների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, նախարարների և նրանց տեղակալների պաշտոնները) կողմից նշված պարտականությունները չկատարելուն, ապա այդ դեպքում Ազգային ժողովը և նրա մարմինները կարող են կիրառել Սահմանադրությամբ սահմանված համապատասխան լիազորությունները (օրինակ՝ Սահմանադրության 113-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի խմբակցություններն ունեն Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունք, իսկ հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը կարող է առաջարկել վարչապետին քննարկել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը):

Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 189.10-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմնին (պաշտոնատար անձին) իր օրինական գործունեության համար անհրաժեշտ օրենքով նախատեսված տեղեկությունը (տվյալը) չտրամադրելը կամ սահմանված ժամկետում չտրամադրելը կամ ոչ լրիվ ծավալով տրամադրելը կամ աղավաղված տեսքով տրամադրելը, ինչպես նաև պետական մարմնին (պաշտոնատար անձին) կեղծ տեղեկություն (տվյալ) ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Կարծում ենք, որ որոշակի հանգամանքների և համապատասխան հանցակազմի առկայության դեպքում իրավասու պաշտոնատար անձի կողմից Քննիչ հանձնաժողովին տեղեկություններ չտրամադրելը, կեղծ կամ ոչ լիարժեք տեղեկություններ տրամադրելը, ինչպես նաև հանձնաժողովի հրավերով չներկայանալը և բացատրություն չտալը կարող է առաջացնել նաև ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:

Այստեղ կարևոր է նաև նշել, որ 2018թ. հոկտեմբերի 2-ին Կանոնակարգի 22-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 1.1-ին մասով, ըստ որի՝ Քննիչ հանձնաժողով ներկայանալու և բացատրություններ տալու, ինչպես նաև հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու պաշտոնատար անձանց պարտականությունը պահպանվում է նաև նրանց պաշտոնից ազատվելուց հետո, եթե տեղեկատվության տրամադրման պահանջը կամ նիստին ներկայանալու և բացատրություններ տալու հրավերն ստացվել է մինչև պաշտոնից ազատվելը:

5. Քննիչ հանձնաժողովի զեկույցը:

Կանոնակարգի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Քննիչ հանձնաժողովն իր գործունեության արդյունքով Ազգային ժողովի նախագահին ներկայացնում է **զեկույց, որը ներառում է հանձնաժողովի ստեղծման համար հիմք հանդիսացած հարցի վերաբերյալ պարզված փաստերը, ինչպես նաև դրանց առնչությամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ հանձնաժողովի եզրահանգումները:** Զեկույցն Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանի և նիստերի օրակարգերում ընդգրկվելու ժամանակ՝ Ազգային ժողովի մյուս օրակարգային հարցերի հետ միասին:

Կանոնակարգի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի նիստում հարցի քննարկումն ավարտվելուց հետո Քննիչ հանձնաժողովի զեկույցը, իսկ դրա վերաբերյալ Քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդի հատուկ կարծիքի առկայության դեպքում՝ նաև հատուկ կարծիքը, ուղարկվում է զեկույցում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց, որոնք կարող են զեկույցի վերաբերյալ իրենց գրավոր պատասխանն Ազգային ժողովի նախագահին ուղարկել մեկամսյա ժամկետում: Պատասխանները տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Այդպիսով, Կանոնակարգի վերոգրյալ դրույթը Քննիչ հանձնաժողովի զեկույցում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց չի պարտավորեցնում պատասխանել զեկույցին, այլ՝ զեկույցում առկա փաստերը գնահատելը, ինչպես նաև առաջարկվող միջոցառումները ձեռնարկելը թողնում է տվյալ մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությանը: Սակայն, կարծում ենք, որ Քննիչ հանձնաժողովի զեկույցում հիմնավորված փաստերի և եզրահանգումների առկայության դեպքում՝ իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի ողջամիտ գործողությունն այն է, որ նա սահմանված ժամկետում այդ փաստերի և եզրահանգումների վերաբերյալ Ազգային ժողովին գրավոր պատասխան ուղարկի:

Քննիչ հանձնաժողովի ստեղծման գործունեության փուլերը

Նախապատրաստական փուլ

- Քննիչ հանձնաժողովի ստեղծում
- Կազմ
- Նախագահ
- Տեղակալ

Պլանավորման փուլ

- Քննության առարկայի և իրավասության ոլորտի հստակեցում
  - Նպատակների և խնդիրների սահմանում
  - Հանձնաժողովի աշխատանքների պլանավորում, ժամանակցույցի և գործողությունների պլանի կազմում
  - Տեղեկատվություն տրամադրողների շրջանակի հստակեցում

Իրականացման փուլ

- Իրավասու մարմիններից և պաշտոնատար անձանցինց տեղեկատվության հավաքագրում
- Տեղեկատվության, փաստերի հավաքագրում
- Արդյունքների վերլուծություն, եզրակացությունների կազմում
- Արդյունքների հիման վրա զեկույցի նախագծի կազմում

Հետագա քայլերի փուլ

- Զեկույցի ԱԺ նախագահին ներկայացում
- Զեկույցի հրապրակայնացում, ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում